ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունիսի 2026 թվականի N 889-Ն

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ

Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «զ» ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33 և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել պետական հավաստագրերի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը ապահովել պետական հավաստագրերի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրելու գործընթացի իրականացումը սոցիալական պաշտպանության միասնական տեղեկատվական e-social համակարգի «Հավաստագրեր» («e-voucher») ենթահամակարգի (այսուհետ՝ «e-voucher» ենթահամակարգ) միջոցով:

3. Սույն որոշմամբ սահմանված խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություն ստանալու նպատակով հավաստագրերը հատկացվում են Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով նախատեսված և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2028 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն որոշման հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի (հավաստագրի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամք տրամադրելուն վերաբերող դրույթներ), որն ուժի մեջ է մտնում 2029 թվականի հունվարի 1-ից:

5. Սույն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 2-8-րդ ենթակետերի դրույթները կիրառվում են՝

1) 0-ից մինչև 5 (ներառյալ) տարեկան երեխաների նկատմամբ՝ 2028 թվականի հունվարի 1-ից.

2) 6-ից մինչև 24 (ներառյալ) տարեկան անձանց նկատմամբ՝ 2029 թվականի հունվարի 1-ից.

3) 25 և բարձր տարիք ունեցող անձանց նկատմամբ՝ 2030 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

19.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ